Կարինե ԲԱՂԵՅԱՆ

XIX ԴԱՐԱՎԵՐՋԻ ԿԱՐՍԻ ԱՐՀԵՍՏՆԵՐՆ ԸՍՏ ԱՏՐՊԵՏԻ «ԻՆՉ ԺԱՌԱՆԳԵՑԻՆՔ» ՁԵՌԱԳԻՐ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ

Կարսը Արևմտյան Հայաստանի այն նշանավոր քաղաքներից էր, որտեղ դեռևս միջնադարում բարձր զարգացման էին հասել արհեստները ու առևտուրը: Xդ. դառնալով Բագրատունյաց մայրաքաղաք, Կարսը, հայ պատմիչների վկայությամբ,[1] վերածվեց խոշոր առևտրաարհեստավորական կենտրոնի, որտեղով անցնում էին Արևելք-Արևմուտք տարանցիկ առևտրական ճանապարհները:[2] Մոնղոլների և միջինասիական վաչկատունների արշավանքների հետևանքով Կարսը և նրա ծաղկող տնտեսությունը անկում ապրեցին: Քաղաքի բնակչությունը, որն ըստ Թ.Հակոբյանի իր ամենաբարձր զարգացման տարիների ընթացքում հասնում էր շուրջ 50000-ի, արտագաղթի հետևանքով նվազեց: Սակայն, շնորհիվ իր անառիկ բերդի և իր տեսակի մեջ եզակի պաշտպանական այլ ամրությունների, քաղաքը չկորցրեց իր ռազմավարական նշանակությունը և թուրքական տիրապետության տարիներին դարձավ առանձին փաշայության կենտրոն՝ մտնելով Էրզրումի սերասկյարության կազմի մեջ:[3] Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Կարսը մնում էր երևելի մի բերդաքաղաք, որն ուներ քաղաքային կենցաղին բնորոշ դիմագիծ և իր ռազմավարական նշանակության շնորհիվ դարձել էր յուրատեսակ կռվախնձոր Թուրքիայի և Ռուսաստանի միջև: 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Կարս քաղաքի և շրջակա գյուղերի հայ բնակչության մի զգալի հատված գաղթեց՝ հաստատվելով Գյումրիում և Շիրակում:[4] Չնայած դրան՝ քաղաքը չկորցրեց իր արհեստավորաառևտրական դեմքը, իսկ 1878թ. Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց և առանձին վարչական միավորի (Կարսի մարզ) կենտրոն դառնալուց հետո նոր վերելք ապրեց: Գյումրի-Ալեքսանդրապոլը, որը համարվում է Կարսի ավանդույթների ուղղակի կրողը, նույնպես զգում է փոխադարձ կապերի, ազդեցությունների հետազոտման անհրաժեշտություն: Ալեքսանդրապոլ-Կարս տնտեսամշակութային կապերն ավելի ամրապնդվեցին վերոհիշյալ իրադարձություններից ու հատկապես երկու քաղաքների միջև երկաթուղու կառուցումից հետո:

Իր արհեստավորաառևտրական հարուստ ավանդույթներով հայտնի Կարս քաղաքը ցայսօր պատշաճ գիտական ուսումնասիրության առարկա չի դարձել: Դեռևս նախանցյալ դարում Մոսկվայում հրատարակված Կրպեի «Կարս քաղաք»[5] ուսումնասիրությունը սիրողական-ճանաչողական բնույթ ունի: Հարկ է նշել նաև «Մշակ»-ում տպագրված Խ.Մառանկոզյանի հոդվածը,[6] որում վերլուծվում են Կարսը և Կարսի համքարային կարգերը: Որոշ աղբյուրագիտական բնույթի տեղեկություններ կան նաև ռուսական տեղեկատու-վիճակագրական ժողովածուներում,[7] որոնք կցկտուր տվյալներ են հաղորդում քաղաքում տարածված զբաղմունքների մասին:

Կարսում տարածված զբաղմունքների, արհեստների ու արհեստավորների մասին շատ սեղմ տեղեկություններ է հաղորդում Վ. Արրահամյանը,[8] ինչն ամբողջական պատկերացում չի տալիս քաղաքի դերի ու նշանակության մասին: Այդ առումով խիստ արժեքավոր է գրող և հասարակական գործիչ Ատրպետի «Ի՞նչ ժառանգեցինք»

---

[1] *Արիստակես Լաստիվերցի, Պատմություն հայոց, բարգմ. Վ.Գևորգյանի, Եր., 1973:*

[2] *Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., հ. 1, Եր., 1958, էջ 80-81: Տե՛ս նաև Թ. Հակոբյան, Պատմական Հայաստանի քաղաքները, Եր., 1987, էջ167:*

[3] *Նույն տեղում, էջ 168:*

[4] *Ադ. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIXդ., մաս Ա, Բ, Թիֆլիս, 1894-1895: Население Восточной Армении в XIX- начале XXв., Ер., 2002; Ա. Հայրապետյան, Արևելյան Շիրակը XIX դ. առաջին կեսին, Գյումրի, 2005:*

[5] *Կրպե, Կարս քաղաք, Մ., 1894:*

[6] *Խ. Մառանկոզեան, Էրզրումի և Կարսի արհեստաւորների համայնական կարգերը, «Մշակ», 1891, N 68:*

[7] *Обзор Карской области, Тифлис, 1886.*

[8] *Վ. Արրահամյան, Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում (18-20-րդ դարի սկիզբը), Եր., 1971, էջ 69-70:*

ուսումնասիրությունը, որը պահվում է Հայաստանի պատմության թանգարանի արխիվում:[9] Հետաքրքիրն այն է, որ աղբյուրագիտական անուրանալի արժեք ունեցող անտիպ այս աշխատությունն օգտագործել է միայն Ս.Դավթյանը[10] և, չգիտես ինչու, անտեսվել է արհեստների և համքարությունների խնդրով զբաղվողների կողմից:

Ատրպետը[11] (Սարգիս Մոսրայաջյան-1860-1937թթ.) գրական, հասարակական-քաղաքական բուռն կենսագրություն ունեցող այն հայ գործիչներից էր, որի թողած տպագիր և անտիպ ժառանգությունն ընդգրկում է հայոց կյանքի տարբեր բնագավառներ: Շնորհիվ իր բնածին դիտողականության և ինքնակրթության՝ Ատրպետին հաջողվել է բազմաթիվ արժեքավոր տեղեկություններ հավաքել հայերի և հարևան ժողովուրդների տնտեսական, մշակութային և կրոնական հարաբերությունների վերաբերյալ, որոնց վերլուծությունները, չնայած իրենց հակասականությանն ու ծայրահեղ գնահատականներին, չեն կորցրել իրենց աղբյուրագիտական արժեքը:

«Ի՞նչ ժառանգեցինք»-ը գրվել է 1933թ. Լենինականում և վերաբերում է իր ծննդավայր Կարս քաղաքին,[12] նրա արհեստներին ու զբաղմունքներին, բնակարաններին ու հասարակական այլ կառույցներին: Հեղինակն իր աշխատության առաջաբանում կարևորում է արհեստների դերը հայ ժողովրդի կյանքում՝ գտնելով, որ «միակ փրկիչը արհեստավորն է»: Այս մոտեցումն ընդհանրապես հատուկ էր մշակականներին, որոնք փորձում էին ավանդական արհեստների և արհեստավորական կենցաղի պահպանման և «գովերգման» միջոցով ընդդիմանալ արդյունաբերական հեղաշրջման հետևանքով առաջացած համահարթեցման երևույթներին: Ուստի Ատրպետը ձգտում է հնարավորինս մանրամասն ներկայացնել Կարսում տարածված արհեստները, արհեստավորներին ու նրանց կազմակերպությունները: Հատկանշական է, որ հեղինակն իր սեփական քննությունն է կատարում, անցկացնում է պատմական զուգահեռներ՝ հաստատելու համար հայոց մեջ տվյալ արհեստի վաղ ծագումն ու զարգացումը, դրա տարածվածությունը, ներկայացնում է արհեստավորական արտադրանքի արդյունահանման ծավալները և այլն: Մեզ համար սկզբնաղբյուրի նշանակություն ունեն ձեռագրի այն հողվածները, որ նկարագրում են որոշակի արհեստները: Աշխատանքը պարունակում է նաև քաղաքի կենցաղին ու տվյալներին վերաբերող արժեքավոր նյութեր:

Ուսումնասիրությունը գրված է խիստ կանոնակարգված, ողջ նյութը բաժանված է 10 մասի, 35 գլուխների, սրանք էլ՝ ենթագլուխներից: Գլուխները վերաբերում են մայր արհեստներին, բաժինները՝ դրանց առանձին ճյուղերին, իսկ ենթագլուխներում ներկայացված են ավելի նեղ մասնագիտացումները: Այսպես, օրինակ՝ մաս I-ը կոչվում է «Ջուլհակներ», որի առաջին գլուխը վերաբերում է բամբակագործներին, բաժանվում է մի քանի ենթագլխի՝ մանողներ, կտավագործներ, մանուսայագործներ, դաջազարդողներ, չիթ նկարողներ և այլն: Արհեստների մի մասը ներկայացվում է տեղական անվանումով, թվարկվում է ոչ միայն զբաղմունքը, այլև դրա կատարման եղանակները ու պատրաստվող իրերը՝ իրենց գործածման եղանակներով ու տարածման արեալներով: Հեղինակը ոչ միշտ, բայց հիշատակում է նաև հայտնի վարպետներին և նրանց թիվը: Ատրպետը ներկայացնում է արհեստանոցների և կրպակների թիվը, դրանց տեղադրությունը և այլն: Ըստ Ատրպետի՝ Կարսում XIX դ. վերջին կային 60-ից ավելի արհեստներ, որ արտահայտված չեն Վ. Աբրահամյանի կողմից ներկայացված ցուցակներում:[13] Ստորև ներկայացվում է արհեստների ու զբաղմունքների այն ցանկը, որոնք իր աշխատության մեջ հիշատակում է հեղինակը: Որպեսզի ավելի հեշտ լինի համեմատություններ անցկացնելն ու տարբերությունները նկատելը, միաժամանակ տրվում է նաև Վ. Աբրահամյանի աշխատության մեջ առկա աղյուսակը:

---

[9] ՀՊՊԹ արխիվ, գործ 176 (ա):

[10] Ս. Դ ա վ թ յ ա ն, Հայկական ասեղնագործություն, Եր., 1972:

[11] Ատրպետի մասին կենսագրական տվյալները տե՛ս, Ատրպետ, Երկեր, Եր., 1964, Կ.Դանիելյանի նախաբանը, էջ 3-15:

[12] Ատրպետի հայրը՝ Սմբատիչ Մոսրայաջյանը Կարսի հարուստ վաճառականներից էր և իր մասնագիտությանը զուգահեռ փաստաբանական գործունեությամբ էր զբաղվում Կ.Պոլսում:

[13] Վ. Ա բ բ ա հ ա մ յ ա ն, նշվ. աշխ., էջ 70:

Ե/Հ	Կարսի արհեստների անուններն ըստ Ատրպետի	Արհեստների տեղական անվանումներն ըստ Ատրպետի	Ե/Հ	Կարսի արհեստներն ըստ Վ. Աբրահամյանի
1	բամբակագործներ		1	Նաչարներ
2	կոռոմագործներ		2	Հացագործներ
3	նուռ եռամագործներ		3	Հոուշակագործներ
4	մանուռայագործներ		4	Մսագործներ
5	դաչագործներ	դաճբաչ	5	Դեռձակներ
6	չեթ նախշողներ	դալամքյար չթչի	6	Գլխարկ կարողներ
7	նանեխի ծաթանագործներ		7	Կոշկակարներ
8	էհոռմագործներ		8	Վառարանագործներ
9	շալագործներ		9	Աստաղագործներ
10	ցեցիմագործներ		10	Խառատներ
11	կարպետագործներ		11	Տակառագործներ
12	գորգագործներ		12	Հյուսներ
13	թաղիքագործներ		13	Թիթեղագործներ
14	ապրեշումագործներ		14	Պղնձագործներ
15	ասեղնագործներ		15	Անվագործներ
16	ժանեկագործներ		16	Դարբիններ
17	պարանագործներ	դայթանչի	17	Փականագործներ
18	մեռարկու կարողներ	աբաչի	18	Ժամագործներ
19	մուշտակագործներ		19	Ոսկերիչներ
20	կաշեգործներ	դաֆաֆ	20	Անագապատողներ
21	կոշկակարներ		21	Ջինագործներ
22	ներկարարներ	բոյաչի	22	Անասառապահներ
23	տրեխագործներ	չարոխչի	23	Վարսավիրներ
24	թամքագործներ		24	Կազմարարներ
25	վրանագործներ		25	Քարտաշներ
26	դեռձակներ		26	Կուպրագործներ
27	նրիզագործներ	դազազ	27	Ապակեգործներ
28	բրուտներ		28	Ներկարարներ
29	աղյուսագործներ		29	Ջամբյուղագործներ
30	ճախարակագործներ	չրխչի	30	Սղոցողներ
31	հյուսներ			
32	երկրագործական գործիքներ պատրաստողներ			
33	սայլ պատրաստողներ	սայլանճի		
34	անվագործներ	մառանչի		
35	կամ շինողներ			
36	գուբան շինողներ			
37	սանրագործներ			
38	պղնձագործներ			
39	թիթեղագործներ			
40	ձուլագործներ			
41	դաշույնագործներ-պողպատագործներ	բիչախչի		
42	դարբիններ			
43	պայտարներ			
44	փականագործներ			
45	ջինագործներ			
46	ոսկերիչներ-թելքաշ, փորագրող, արծնապատող, սնագրող	զարգյար, չիֆթիչի, դալամքյար էմալող, ասվաղող		
47	պղնձի փորագրիչներ			
48	կնիքագործ-քանդակագործներ			
49	հայելագործներ			
50	ապակեգործներ			
51	սափրիչներ			

52	կազմարարներ			
53	խավախարդներ			
54	ծաղկագրողներ			
55	թանաք շինողներ			
56	լուսանկարիչներ			
57	կենդանագիրներ			
58	գինեգործներ			
59	երաժիշտներ			
60	պարուհիզպաններ			
61	բաղնիսպաններ			

Կարծում ենք, որ Ատրպետի ցուցակը ևս ամբողջական չէ, քանի որ հեղինակը բոլոր արհեստների մասին չի գրել: Աղյուսակում բացակայում են որոշ արհեստներ, որոնք առկա են Վ. Աբրահամյանի ներկայացված ցանկում: Իսկ թվարկված արհեստների առկայության իսկությունը կասկած չի հարուցում, քանի որ հեղինակը ճշգրիտ նշում է արհեստանոցների շարքերի տեղավայրը, ապա՝ թվարկում հայտնի վարպետներին: Ներկայացված արհեստների ճնշող մեծամասնությունն առկա է նաև Կարինի և հատկապես՝ Ալեքսանդրապոլի արհեստների ցուցակներում. մի հանգամանք, որը մեկ անգամ ևս վկայում է Կարին-Կարս-Ալեքսանդրապոլ արհեստավորական կապերի ու ավանդույթների մեծ ընդհանրությունը:

Ատրպետի ներկայացրած արհեստների թվում բացառիկ տեղ են գրավում վրանագործությունը և քանդակագործությունը, որոնք՝ որպես առանձին արհեստ, ընդհանրապես հայտնի չեն և չեն ներկայացվել և հայկական ոչ մի քաղաքի կամ գաղթավայրի արհեստների ցուցակում: Հետաքրքիր է, որ դրանք, ըստ հեղինակի, շատ տարածված և մեծաթիվ վարպետներ ունեցող արհեստներ են: Վրանագործության տարածվածությունն ու զարգացումը նա կապում է օսմանյան բանակի մատակարարման հետ: Այստեղ հարկ է ընդգծել Ատրպետի շեշտադրած մի հանգամանք. թուրքական բանակի մատակարարումը, որ իրականացվում էր հայերի կողմից: Հեղինակը նկարագրում է, թե ինչ չափով էին հայ արհեստավորներն աշխատում թուրքական բանակի համար՝ սկսած կաշեգործներից, դերձակներից, տրեզագործներից, կոշկակարներից, վերջացրած թամբագործներով ու վրանագործներով: Ընդ որում, հեղինակը թվարկում է նաև Արևմտյան Հայաստանի այլ քաղաքների նման արհեստավորներին, որոնք աշխատում էին թուրքական կառավարության պատվերով:Այսպես, թամբագործները, ըստ Ատրպետի, «ոչ միայն երկրի կարավաններին մատակարարում էին ուղտի, ձիու, ջորու, իշու համեստները, կաշվե և մաշկի բոլոր սարքերը, այլ սրանք էին պատրաստում դարերից ի վեր Օսմանյան բանակի ձիերի, կառքերի ամբողջ սարքվածքը: Խիստ շատ անգամ ռազմադաշտի զորականների հրամաններով արհեստավոր մաշկագործներին և խաղախարդներին խմբերով քշում էին այս քաղաքից այն քաղաքը, բերդը և արհեստանոցները՝ իրենց գործիքներով ռազմական կարևոր պատրաստություններ կատարելու: Թամբագործները պատրաստում էին բեռնակիր գրատների համար պայուսակներ, որ ռազմական մթերքները փոխադրեն հարյուրավոր կիլոմետրերի ճանապարհներ»:[14]

Ինչ վերաբերում է վրանագործներին, ապա նրանք աշխատում էին ինչպես մասնավոր անձանց՝ չոքանների, քրդերի, բեկերի, ցեղապետների, այնպես էլ զինվորականների համար:.Ատրպետը մանրամասն նկարագրում է հատկապես զինվորական վրանները՝ պարզ և բարդ, զարդարուն և հասարակ՝ նայած պատվիրատուի կարողության: Օրինակ՝ «մեծատուն քուրդ ցեղապետերը այնպիսի վրաններ ունեին՝ գորգով, կարպետներով ու թարեքներով կահավորված, որ նրանց մեջ առանց դժվարության կարելի էր ձմեռները ապրել»:[15] Միաժամանակ հեղինակը նշում է, որ Էրզրումի վրանագործները ավելի զարգացած էին և ավելի ընդարձակ գործ ունեին: Հարկ է նշել, որ Կա-

[14] *Ատրպետ, Ի՞նչ ժառանգեցինք, էջ 32:*
[15] *Նույն տեղում, էջ 34:*

ղինի արհեստների համքարությունների նվիրված Ս. Եղիազարյանցի և Խ.Մառանկոզյանի հետազոտություններում այս զբաղմունքների մասին հիշատակություն չկա:[16]

Մյուս արհեստը, որի մասին խոսում է Ատրպետը, «քանդակագործությունն» է: Հեղինակն առանձնացնում է այս արհեստավորներին՝ որպես «հատուկ կնիք փորողներ», որոնք փորագրում էին կարծր քարերի վրա: Արհեստի լայն մասսայականությունը (ամեն քաղաքում 10-20 փորագրիչ) բացատրվում էր նրանով, որ «ոչ միայն մեծամեծ պաշտոնավորները, հարուստները, հոգևորականները, նույնիսկ չարչիներն ու գյուղացիները պարտավորված էին անհատական կնիք կրելու: Գրագետների թիվը այնքան փոքր էր, որ փոխանակ ստորագրության, պիտի անհատական կնիք պահեր ամեն մարդ, մուրհակ կամ դաշնագիր վավերացնելու համար»:[17]

Աշխատության բարձր արժեքը նաև այն է, որ հեղինակը փորձում է ամեն մի արհեստ ներկայացնել հայկական մյուս քաղաքների հետ համեմատության մեջ՝ ցույց տալու համար արհեստի տարածման արեալները: Միաժամանակ նա հիշատակում է անվանի վարպետներին, նրանց արհեստի ժառանգորդման հանգամանքները, տոհմական արհեստավորների նշանավոր գործերի պատմությունը՝ երբեմն նաև ցավով նշելով, որ այդի ընկնող վարպետների ժառանգները չեն շարունակել նախնիների գործը, և ընդհատվել է ժառանգականության դարերով ձգվող շղթան:

Ալեքսանդրապոլի արհեստների ու արհեստավորության ուսումնասիրության առումով ևս «Ի՞նչ ժառանգեցինք»-ը հետագա լուրջ վերլուծություն պահանջող տեղեկություններ է պարունակում: Այստեղ հաճախ թվարկվում են այն վարպետները, որոնք կամ որոնց հետնորդները Կարսից տեղափոխվել են Ալեքսանդրապոլ՝ շարունակելով կամ ընդհատելով հիշյալ արհեստը: Քաղաքի ազգագրության ուսումնասիրության տեսանկյունից Կարսի քաղաքային բնակարանների, հագուստի, զարդերի, կենցաղային իրերի, տոնդրությունների թվարկումը ևս անփոխարինելի սկզբնաղբյուրի արժեք է հաղորդում հիշյալ աշխատությանը: Ցավոք, Ատրպետը ամբողջովին չի իրագործել իր մտահղացումը՝ չհասցնելով նկարագրել շատ քաղաքային զբաղմունքներ, չնայած դրանք ձեռագրի բովանդակության մեջ գրանցված են: Փաստորեն ձեռագիրն անավարտ է: Տեղ գտած անհարթությունների շարքում հարկ է առանձնացնել այն, որ հեղինակը փորձում է իր ոչ միշտ տեղին վերլուծությունն ու զննությունը կատարել՝ հիշելով հնագիտական գտածոներ, բանգարանային արժեքներ, կամ այլ սկզբնաղբյուրներ, որոնք շեղել են նրան բուն արհեստներ, զբաղմունքներն ու կենցաղը նկարագրելուց:

Թերություններով հանդերձ՝ Ատրպետի ձեռագիրը բացառիկ ուշագրավ և արժեքավոր սկզբնաղբյուր է ոչ միայն Կարսի, Ալեքսանդրապոլի, այլև ընդհանրապես հայկական ժողովրդական արհեստների, իսկ ավելի լայն առումով՝ հայոց կենցաղամշակութային համալիրի ուսումնասիրության համար:

РЕМЕСЛА г. КАРС КОНЦА XIX ВЕКА ПО РУКОПИСНОМУ ИССЛЕДОВАНИЮ АТРПЕТА "ЧТО МЫ УНАСЛЕДОВАЛИ"

___ *Резюме* ___ ___ *К. Базеян* ___

В статье представлен анализ рукописного исследования армянского писателя и общественно-политического деятеля Атрпета (Саргис Мубаяджян) "Что унаследовали", которое хранится в архивных фондах Государственного исторического музея Армении. Рукопись посвящена его родному городу Карсу. Автор, по мере возможностей, скрупулезно описывает распространенные в городе ремесла и занятия, ремесленников и их учреждения, объемы реализации товара и т. д. В рукописи имеются также интересные и уникальные сведения о быте и традициях Карса, необходимые для изучения городского быта армян конца 19-ого века.

---

[16] *Ս. Եղիազարյանց, Արհեստների ճյուղերը Կարինում XIX դարի առաջին երեք տասնամյակում, «Մշակ», 1891, № 65: Խ. Մառանկոզեան, Էրզրումի և Կարսի արհեստաւորների համայնական կարգերը, «Մշակ», 1891, N 68:*

[17] *Ատրպետ, նշվ. աշխ., էջ 63:*